ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ԿՈՒԲ ԻՆՎԵՍԹ» ՓԲԸ ընդհանուր ժողովի

05 փետրվարի 2024թ.- ի թիվ 2024/2 որոշմամբ

Ժողովի նախագահ՝ Արմեն Տեր-Հակոբյան

ԿՈՒԲ ԻՆՎԵՍԹ ՓԲԸ
Գործարքների արդյունքում շահերի հնարավոր բախման բացառմանն ու կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացման

ԿԱՐԳ

2024

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 «ԿՈՒԲ ԻՆՎԵՍԹ» ՓԲԸ (այսուհետ՝ Ընկերություն) «Գործարքների արդյունքում շահերի հնարավոր բախման բացառմանն ու կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացման կարգը» միտված է հաճախորդների շահերի գերակայության ապահովմանը՝ Ընկերության, Ընկերության աշխատողների կամ վերջիններիս և/կամ Ընկերության հետ կապված, կամ այլ անձանց անձնական շահերի նկատմամբ: Կարգը նաև նպատակ ունի հիմքեր ստեղծել շահերի բախման հնարավոր դեպքերի բացահայտման, ինչպես նաև դրանց հետ առնչվող այլ ռիսկերի կանխարգելման համար:

1.2 Կարգը հաստատվել է "Արժեթղթերի շուկայի մասին" ՀՀ օրենքի և ներդրումային ընկերությունների գործունեությունը կարգավորող ՀՀ կենտրոնական բանկի կողմից ընդունված ենթաօրենսդրական ակտերի, ինչպես նաև Ընկերության «Ներդրումային քաղաքականության» հիման վրա և գործում է դրանց շրջանակներում:

1.3 Կարգի փոփոխություններ և/կամ լրացումներ կարող են կատարվել միայն Ընկերության ընդհանուր ժողովի որոշմամբ՝ բաժնետերերի կամ Ընկերության գործադիր տնօրենի առաջարկով կամ ՀՀ գործող օրենսդրության պահանջով:

Կարգը պետք է վերանայվի Ընկերության գործունեության միջավայրի փոփոխությանը զուգընթաց, բայց ոչ պակաս, քան երկու տարին մեկ անգամ:

1.4 Կարգն ուժի մեջ է մտնում Ընդհանուր ժողովի հաստատումից տաս օրացուցային օր հետո: Կարգը ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած է ճանաչվում Ընկերության հիմնադիր ժողովի կողմից 25.01.2017թ–ին հաստատված «Իրականացվող գործարքների արդյունքում հնարավոր շահերի բախման բացառմանն ու կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացման ուղեցույցը» (Խմբագրություն 1):

Կարգը հաստատելուն հաջորդող տաս օրվա ընթացքում այն ենթակա է ներկայացման ՀՀ կենտրոնական բանկ:

1.5 Կանոնակարգը բաց փաստաթուղթ է և հասանելի է Ընկերության ողջ անձնակազմին և հաճախորդներին: Փաստաթղթի և դրա փոփոխությունների հասանելիությունն ապահովվում է Ընկերության ներքին լոկալ համակարգչային տեղեկատվական համակարգում այն տեղադրելու միջոցով:

2. ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

2.1 Տերմիններ, հասկացություններ և հապավումներ.

- *Ընկերություն* - "ԿՈՒԲ ԻՆՎԵՍԹ» ՓԲԸ:
- *Կարգ* - «ԿՈՒԲ ԻՆՎԵՍԹ» ՓԲԸ «Գործարքների արդյունքում շահերի հնարավոր բախման բացառմանն ու կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացման կարգ":
- *Ընկերության ընդհանուր ժողով* կամ *Ընդհանուր ժողով* - Ընկերության բաժնետերերի ժողով:
- *Ընկերության գործադիր տնօրեն* կամ *Գործադիր տնօրեն* - Ընկերության կանոնադրությամբ նախատեսված Ընկերության միանձնյա գործադիր մարմին:
- *Արժեթուղթ* - ՀՀ օրենսդրությամբ և գործարար շրջանառության սովորույթներով որպես արժեթուղթ սահմանվող ցանկացած գույքային իրավունք:

- *Հաճախորդ* - ցանկացած ֆիզիկական անձ կամ տնտեսվարող սուբյեկտ, որի հետ Ընկերությունն ունի ներդրումային ծառայությունների մատուցման գործող պայմանագիր:
- *Ընկերության ներքին իրավական ակտ* - Ընկերության կառավարման մարմինների կողմից հաստատված և Ընկերությունում պարտադիր բնույթ ունեցող փաստաթուղթ:
- *Տեղեկատվական համակարգ* - Ընկերության ներքին լոկալ համակարգչային տեղեկատվական համակարգ:

3. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ԴԵՊՔԵՐԸ

3.1 Շահերի բախումը՝ դա ներդրումային ծառայությունների մատուցման շրջանակներում առաջացող Ընկերության, Ընկերության հաճախորդների, աշխատողների և/կամ վերջիններիս և/կամ Ընկերության հետ կապված անձանց միջև առաջացող գույքային և/կամ այլ շահերի հակասությունն է, որի արդյունքում Ընկերության և/կամ դրա աշխատողների գործողությունները կամ անգործությունը առաջացնում են վնասներ կամ այլ ոչ բարենպաստ հետևանքներ կողմերի համար:

3.2 Շահերի բախում կարող է առաջանալ, երբ Ընկերության հետ կապված, ինչպես նաև այլ անձանց օգտին իրականացվող գործարքները իրականացվեն շուկայական գներին չհամապատասխանող գներով կամ խախտելով Ընկերության ներդրումային նպատակները, ինչի արդյունքում կնքված գործարքները կհամապատասխանեն Ընկերության հետ կապված կամ այլ անձանց շահերին, սակայն կհակասեն Ընկերության կամ դրա հաճախորդների շահերին:

3.3 Ներդրումային ծառայությունների մատուցման շրջանակներում առաջացող Շահերի բախման հնարավոր դեպքերն են՝

- հաճախորդին շուկայականից ավելի բարձր գնով արժեթղթերի վաճառք Ընկերության, Ընկերության աշխատողների կամ վերջիններիս և/կամ Ընկերության հետ կապված, ինչպես նաև այլ անձանց սեփական պորտֆելից՝ առանց հաշվի առնելու հաճախորդի ներդրումային նպատակները և հաճախորդի կողմից Ընկերությանը ներկայացված պատվերում նշված էական պայմանները,
- հաճախորդին պատկանող արժեթղթերի վաճառք շուկայականից ավելի ցածր գնով Ընկերությանը, Ընկերության աշխատողներին կամ վերջիններիս և/կամ Ընկերության հետ կապված, ինչպես նաև այլ անձանց,
- հաճախորդի միջոցների ներդրում Ընկերության, Ընկերության աշխատողների և/կամ Ընկերության հետ կապված, ինչպես նաև այլ անձանց պատկանող արժեթղթերում,
- հաճախորդին պատկանող արժեթղթերով Ընկերության, Ընկերության աշխատողների և/կամ Ընկերության հետ կապված, ինչպես նաև այլ անձանց օգտին իրականացվող այլ գործարքներ շուկայական գներին չհամապատասխանող գներով կամ խախտելով հաճախորդի ներդրումային նպատակները, հաճախորդի վրա ճնշման գործադրում կամ այնպիսի խորհրդատվության մատուցում, որի արդյունքում կնքված գործարքները համապատասխանում են Ընկերության, Ընկերության աշխատողների կամ վերջիններիս և/կամ Ընկերության հետ կապված, ինչպես նաև այլ անձանց շահերին,
- մեծ ծավալներով կամ հաճախորդի շահերին չհամապատասխանող գործարքների կնքում, որը նպատակ է հետապնդում ավելի մեծ ծավալներով միջնորդավճարների և այլ վճարների գանձում Հաճախորդից,

- հաճախորդի միջոցների օգտագործում Ընկերության սեփական առևտրային ռազմավարությունն իրականացնելու նպատակով,
- Ընկերությունում համապատասխան հաշիվներում հաշվառվող և ներդրումներ իրականացնելու համար նախատեսված Հաճախորդի միջոցների կանխամտածված պահում՝ Ընկերության սեփական առևտրային ակտիվ գործառնությունների իրականացման նպատակով,
- էական նշանակություն ունեցող և արժեթղթերի շուկայի գնագոյացման վրա ազդելու հնարավորություն ունեցող՝ հաճախորդի կողմից ստացված ծառայողական տեղեկատվության օգտագործում ի շահ Ընկերության, Ընկերության աշխատողների կամ վերջիններիս և/կամ Ընկերության հետ կապված անձանց:

3.4 Բացի վերը նշվածից, ներդրումային գործունեությունը կարող է ուղեկցվել շահերի բախման նաև այլ դեպքերով:

4. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԲԱՑԱՌՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

4.1 Իր գործունեության ընթացքում Ընկերությունը և դրա աշխատողները պարտավոր են առաջնորդվել բացառապես Ընկերության և Ընկերության հաճախորդների շահերով, որոնք որևէ կերպ չեն կարող ստորադասվել այլ անձանց, այդ թվում՝ աշխատողների ու փոխկապակցված անձանց շահերին:

4.2 Արժեթղթերի շուկայում գործառնություններ իրականացնելիս Ընկերությունը գործում է հետևյալ սկզբունքներով՝

- անկողմնակալություն,
- շիտակություն,
- ճշտապահություն,
- թափանցիկություն:

4.3 Գործարքներ կատարելիս Ընկերությունը գործում է ելնելով բացառապես իր ու իր հաճախորդների շահերից: Կոնկրետ գործարքներ կնքելիս կամ գործընկերներ ընտրելիս Ընկերությունը ելնում է հետևյալ հիմնադրույթներից՝

1) նվազագույն ծախսատարություն՝ ներառյալ միջնորդավճարները և տոկոսադրույքները,
2) հնարավոր առավելագույն եկամտաբերություն՝ ներառյալ ակնկալվող եկամուտները կատարված ծախսերի ու ներդրումների համեմատ,
3) ներդրումների նպատակային ժամկետայնության հնարավոր համապատասխանեցումը գործընկերոջ համանման նպատակներին,
4) գործընկերոջ հուսալիությունը և նրանց հետ համագործակցության արդյունավետության վերլուծությունը:

4.4 Գործարքներ կնքելիս Ընկերության հետ փոխկապակցվածությունը չի կարող դիտվել որպես առավելություն այլ հնարավոր գործընկերների նկատմամբ և դրանց հետ գործնական հարաբերությունները կառուցվում են բացառապես վերը նշված հիմնադրույթներից ելնելով:

4.5 Ընկերության շահերի պաշտպանման նպատակով համապատասխան աշխատողները պարտավոր են՝

- չիրականացնել Ընկերության շահերին հակասող գործարքներ,

- Ընկերության և հաճախորդների շահերը համարել գերակա Ընկերության հետ փոխկապակցված անձանց և այլոց շահերի նկատմամբ,
- գործարքներ կնքելիս շահերի բախման հնարավոր դեպքեր ի հայտ գալու դեպքում առաջնորդվել բացառապես վերը շարադրված հիմնադրույթներով,
- ապահովել կատարված գործարքների վերլուծության և վերոնշյալ հիմնադրույթներով առաջնորդվելու փաստը վերահսկելու համար բավարար տեղեկատվության ապահովումը (կատարված հարցումներ, ստացված առաջարկություններ, մերժված կամ բանակցված հայտեր և այլն)
- իրենց իրավասությունների շրջանակում ի հայտ եկած կամ հնարավոր շահերի բախման մասին տեղեկատվության առկայության դեպքում պարտավոր են դրա մասին տեղեկացնել Գործադիր տնօրենին:

4.6 Ներդրումային ծառայություններ մատուցելիս Ընկերության համապատասխան իրավասություններ ունեցող աշխատողները պարտավոր են՝

1) պահպանել տվյալ ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրության և Ընկերության ներքին իրավական ակտերի պահանջները,
2) խուսափել այնպիսի գործարքների կնքումից, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ Ընկերության և/կամ հաճախորդների շահերի վրա,
3) իրենց իրավասությունների շրջանակներում տեղեկացնել անմիջական ղեկավարին ՀՀ օրենսդրության և Ընկերության ներքին իրավական ակտերի հնարավոր խախտումների, ինչպես նաև այն գործառնությունների մասին, որոնց առնչությամբ Ընկերությունը ՀՀ օրենսդրության համաձայն կարող է դիտվել որպես շահագրգիռ անձ:

4.7 Ներդրումային ծառայությունների մատուցման գործընթացում ներգրավված աշխատողները պարբերաբար հրահանգավորվում են սույն և Ընկերության այլ ներքին իրավական ակտերով, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ՝ Շահերի բախման կանխարգելմանն ուղղված միջոցառումների և պահանջների պահպանմանը նպատակաուղղված դրույթների ու քայլերի վերաբերյալ: